

ԲԳԱՐԱՆ

ԼԵՅԼԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

II, III, IV դասարանների համար

Երևան - 1995
«Շաղիկ»

Ժողովրդի երգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, երբ կարիք են զգում:

Կոմիտաս

Երգարանը նախատեսված է երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում երգի ուսուցման համար: Այն իր մեջ ընդգրկում է հայկական ժողովրդական ստեղծագործության տարբեր ժանրերի երգեր (բացառությամբ՝ «Անդաստան» երգի). մանկական, պարերգեր, աշխատանքային, ծիսական, հոգևոր, գովքերգեր, կուգերգեր, օրհներգեր, չենք խուսափել նաև սիրային երգերից, քանի որ, Մանուկ Աբեղյանի խոսքերով ասած՝ «...ժողովրդական ապնիվ երգը, ինչպիսի բովանդակություն էլ ունենա, ...նրա (աշակերտի) համար միշտ սիրելի է ու կրթիչ»:

Երգարանի նմուշներն ընտրվել են հրատարակված երաժշտական ժողովածուներից (Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Ա. Բրուտյանի, Ա. Շահնազարյանի, «Թալին», «Հայրենի երգեր»), ինչպես նաև մեր ժամանակներում տարածում գտած, բայց չհրատարակված երգերից:

Երգերը փոխադրված ու հարմարեցված են երեխայի ձայնածավալին և դասավորված են *պարզից բարդ* սկզբունքով:

Երկրորդ դասարանի ծրագրում կետեղված են հիմնականում մանկական երգեր ու պարերգեր:

Երրորդ դասարանի երգացանկում գերակշռում են Կոմիտասի մշակած երգերը:

Չորրորդ դասարանում ծիսական, հոգևոր, կուգերգեր, օրհներգեր, աշխատանքային երգեր են:

«Անդաստան» երգի մեղեդին Մովսես Խորենացու շարականի մեղեդին է, խոսքերը՝ Դանիել Վարուժանինը: Զուգակցել և մշակել է Արմեն Շահնազարյանը: Երգը տրված է միաձայն և երկձայն կատարման համար:

Երգարանը մի փորձ է՝ երեխաներին ծանոթացնելու դարերից եկող մեր երգարվեստի գողտրիկ նմուշներին:



II

ԴԱՍԱՐԱՆ

ԻՄ ՉԻՆԱՐԻ ՅԱ՛ՐԸ



Արև թըռվըռով ելավ,
Իմ չինարի յա՛ըը,
Մեր բանը կըռվով ելավ.
Դարդիման[1] յա՛ըը.
Թըշնամու որդին մեռնի՛,
Իմ չինարի յա՛ըը,
Իրա չար սըրտով ելավ.
Դարդիման յա՛ըը:

Իմ չինարի յա՛րը,
Իմ չինարի յա՛րը,
Իմ չինարի յա՛րը,
Գովական յա՛րը:

Ճըրագը վառ ա, վառ ա,
Հոր հետ վատամարդ դառա.
Մեր ու աղբեր թո՛ղ տըվի,
Ես իմ սիրածին առա:

Քարտոփի ծերին կանչի՛,
Թո՛ղ թշնամին ամաչի.
Արևի՛դ մեռնեմ, յա՛ր ջան,
Չինարի պես կանաչի՛:

1. Դարդիման - ցավ, վիշտ ունեցող

ԱՂՎԵՍԸ



Աղվեսն էկավ լանջիկ-մանջիկ,
Ոտներ վազան, կարճիկ-մարճիկ:

Վա՜յ, իմ չալիկ, չալ մալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տրոճիկ-մրոճիկ,
Փամփլիկ ճըտեր, վո՜ւյ, վո՜ւյ,
Չի կերցուցի[1] անուշ կուտիկ, վո՜ւյ, վո՜ւյ:

Աղվես նըստեր դարու գըլխուն,
Աչքեր գըցեր թաղ վառըկուն:

Վա՜յ, իմ չալիկ...

Աղվես կասի՝ իմ տեղ նեղ ի,
Հավու ճըտեր փորուս դեղ ի:

Վա՜յ, իմ չալիկ...

Աղվես գընաց մըտավ ջաղաց,
Թաթեր վերուց, մի բոլ խաղաց:

Վա՜յ, իմ չալիկ...

Աղվեսն էկավ տափիկ-մափիկ,
Քանց մեր կատուն՝ սուսիկ-փուսիկ:

Վա՜յ, իմ չալիկ...

Էկավ մըտավ մեր մարագիկ,
Հավու ճըտեր արավ խորտիկ:

Վա՜յ, իմ չալիկ...



1. Ձի կերցուցի - Ձեվ կերցրի

Ա՛Յ ԻՆԴԻԼՈ



Կրկնակ

Ա՛յ ինդիլո, ինդիլո,
Շաքարով անուշ դիլո:

Ես՝ ձորն ի վեր ծնեբակ[1],
Ա՛յ ինդիլո, ինդիլո,
Դու նըմանիս արեգակ,
Շաքարով անուշ դիլո:

Արեգակը դուս գալուս,
Մեկտեղ գընանք դարիդուս[2],

Արեգակի թև աղբեր,
Շաքար մաղեմ՝ կեր, աղբեր,

Շաքարը՝ մաղած պիտի,
Ղանդո[3] շաղափած պիտի,

1. Ծնեբակ - բույսի տեսակ
2. Դարիդուս - սարսահարթ
3. Ղանդ - գլուխ շաքար

ԼՈՐԻԿ



Առավոտյան փըշեց հով,
Արտը ծըփաց, դարձավ ծով,
Արտի միջից թըռավ լոր,
Թըռավ, ընկավ սար ու ձոր:
Ա՛յ լորիկ, ջա՜ն, լորիկ,
Կըլորիկ ու թըմբըլիկ:
Լորիկ, լորիկ, այս տարի
Արտըս ցանել եմ գարի,
Ուր որ գընաս՝ շուտ արի,
Արտիս միջին ծըվարի:
Ա՛յ լորիկ, ջա՜ն, լորիկ,
Կըլորիկ ու թըմբըլիկ:

ՏԱՄԲՈՒՐԵ[1]



Նըխշուն[2] է, նըխշուն է,
Ի՞նչ նըխշուն է տամբուրեն,
Ինչ կէնիմ, ինչ չէնիմ,
Ձեն չրհանե իր հորեն[3]:

Հավք իջավ երկընքուց,
Նըխշուն թելեր իր կտուց.
Ծըլվըլաց, ճրվճրվաց,
Տամբուրեն թևով լըվաց:

Նըստիմ հով, կըթիմ կով,
Զարկեմ զըմփիկ[4], ընկնիմ ծով,
Համ լողամ, համ շողամ,
Համ գիմ տամբուրեն գովամ:

1. Տամբուրե - նվագարան
2. Նըխշուն - նախշուն, գունդգույն
3. Հոր - փխբ. նկատի ունի գործիքի փորը
4. Զըմփիկ զարկել - ծնկները ծալելով պպզել, վեր կենալ: Մանկական խաղ

ՀԱ՛Յ, ՁԸՆԳԱ

Կայտառ

Հա՛յ կընգա, կընգա, կընգա, Հա՛յ կընգա, կընգա, կընգա:
Բրոռան կատուն դարբնի տուն, Հա՛յ կընգա, կընգա, կընգա,

Հա՛յ կընգա, կընգա, կընգա, Հա՛յ կընգա, կընգա, կընգա:
Դարբնի կրոռան կարկ գըլխուն, Հա՛յ կընգա, կընգա, կընգա:

Կրկնակ

Հա՛յ կընգա, կընգա, կընգա,
Հա՛յ կընգա, կընգա, կընգա:

Բրոռան կատուն՝ դարբնի տուն,
Հա՛յ կընգա, կընգա, կընգա,
Դարբնի կրոռան[1] կարկ գըլխուն,
Հա՛յ կընգա, կընգա, կընգա:

Բրոռան կատուն, չալ կատուն,
Փախավ մտավ Սըրբկա տուն:

Բրոռան կատուն՝ հարիսա,
Սըրբիկն ուտի լավանա:

Սըրբիկ նըստե նապ կանա,
Ծամերն ետև սապ կանա:

1. Կռան - մուրճ՝ մետաղները կռելու և հարթեցնելու համար

ԿՈՌՈՒՆԿ, ԾԱՓ ՏՈՒՐ ՈՒ ԹՈՒ՛

Աշխուժ



Կրկնակ

Կրռո՛ւնկ, ծափ տո՛ւր ու թրռի՛,
Կրռո՛ւնկ, աջ (ձախ) թևիս արի՛:

Էսօր լուսին նորել[1] է,
Կրռո՛ւնկ, ծափ տո՛ւր ու թրռի՛,
Նորել է, բոլորել[2] է:
Կրռո՛ւնկ, աջ թևիս արի՛:

Կես գիշերին դուրս ելա,
Կրռո՛ւնկ, ծափ տո՛ւր ու թրռի՛,
Թուխ[3] ամպ անուշ կրցոլա:
Կրռո՛ւնկ, ձախ թևիս արի՛:

Լուսնակը ցոլաց, գընաց,
Դեմ առավ սարին, մընաց:

Քամին է՝ յանա-յանա[4],
Փակած դըռներ կըբանա:

Քամի՛, քամի՛, տա՛ր ու բե՛ր,
Ալ այլուղըս[5] ա՛ռ ու բե՛ր:

1. Նորել - լուսնային նոր ամիսն սկսվել, նորանալ
2. Բոլորել - կլորել
3. Թուխ - սևին տվող մուգ գույն
4. Յանա-յանա - մոլորված, ճանապարհը կորցրած
5. Այլուղ - թաշկինակ

ՀՈ՜Յ, ՆԱՐԵ՛

Ջափավոր և երգային



Հո՜յ, Նարե՛,
Անձրևն էկավ շաղալեն,
Ջա՜ն, Նարե՛,
Թուփ ու տերև դողալեն:
Հո՜յ, Նարե՛,
Հրրեն էկավ իմ ախպեր,
Ջա՜ն, Նարե՛,
Ալ[1] ձին տակեն խաղալեն:

Կայնել ես վարդի հովին,
Քամին տա ծոցիդ մովին[2],
Երեսիդ շողին մեռնեմ,
Աչքերիդ՝ կապույտ ծովին:

Ջաղացը՝ պատիկ-պատիկ,
Աչքերը՝ նրոան հատիկ,
Ամեն քեզի տեսնելուց
Հա՛մ համբարձում, հա՛մ կատիկ:

1. Ալ - վառ կարմիր
2. Մով - կապույտ, այստեղ՝ կապույտ շոր

ԱՂՎԵՍ ՊԱՌԿԵՑ ՃԱՄՓԻ ՏԱԿԻՆ



Աղվես պառկեց ճամփի տակին,
Վու՛յ, վու՛յ,
Վու՛յ, վու՛յ,
Նետով պարկեմ աչքի տակին,
Վու՛յ, վու՛յ,
Վու՛յ, վու՛յ,
Որ մոտ չգա նա մեր ձագին,
Վու՛յ, վու՛յ,
Վու՛յ, վու՛յ:

ԵՂՆԻԿ



- Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել[1]:
- Ասիս-Մասիս սարն եմ արծել:
- Եղնիկ, դու ո՞ր ջուրն ես խմել:
- Սառն աղբյուրի ջուրն եմ խմել:
- Եղնիկ, դու ո՞ր սարն ես քնել:
- Հայոց Անի սարն եմ քնել:
- Եղնիկ, դու ո՞ր ծառն ես քերվել:
- Ծառ խընկենի[2] ծառն եմ քերվել:

1. Արծել - արածել
2. Խնկենի - խնկի ծառ

ՆԱՐԸՄ ՆԱՆԱՅ

Զվարթ և ջերմագին



Նա- րըմ նա-նայ, սի -րո՛ւն աղ-ջիկ, Հա -նըմ նա-նայ, մա-րա՛լ աղ- ջիկ:



Գը- նա՛, գը-նա՛, հետ քե - կի գամ, Նա - րըմ նա-նայ, սի - րո՛ւն աղ-ջիկ,
Հետ քու ու-լուն - քի ձե - նին գամ, Հա - նըմ նա-նայ, մա- րա՛լ աղ-ջիկ:

Կրկնակ

Նարըմ նանայ, սիրո՛ւն աղջիկ,
Հանըմ նանայ, մարա՛լ աղջիկ:

Գնա՛, գնա՛, հետ քեզի գամ,
Նարըմ նանայ, սիրո՛ւն աղջիկ,
Հետ քու ուլունքի ձենին գամ,
Հանըմ նանայ, մարա՛լ աղջիկ:
Փարչիկ[1] լըցնեմ ու քեզի տամ,
Նարըմ նանայ, սիրո՛ւն աղջիկ,
Անուշ պագիկ առնիմ, ետ գամ:
Հանըմ նանայ, մարա՛լ աղջիկ:

Կաքավ թռավ վեր քարերուն,
Ելավ իջավ վեր դարերուն,
Աղջիկ կանչեմ վեր պաղ ջրուն,
Պագնեմ ճակատ ու ճամփեմ տուն:

Քեզի՛ մեռնեմ, պըստի՛կ[2] լուսնակ,
Ուստի՞ց[3] կուգաս մենակ-մենակ,
Ծառ եմ տընկել քեզ նմանակ,
Խաղող բըռնենք սև ու սպիտակ:

1. Փարչ - վիպը կարճ, հողե փոքր աման, որով ջուր են խմում
2. Պստիկ - փոքրիկ
3. Ուստի՛ - որտեղի՞ց

ՀՈՊԱ ՁԱՐԿԵ՛ ՈՒ ՔԵԼԵ՛

Գնայուն



Կրկնակ

Վա՛յ լե՛, լե՛ ու լե՛, լե՛,
Հոպա կարկե՛ ու քելե՛:

Կուժն առա, գացի[1] աղբյուր,
Վա՛յ լե՛, լե՛ ու լե՛, լե՛,
Լըցրեցի կըժով պաղ ջուր:
Հոպա կարկե՛ ու քելե՛:

Սարեն իջավ գույգ աղջիկ,
Ջույգի գոգնոցն էլ լաստիկ[2]:

Ջուր կուգա բարձրը սարեն,
Կըթափի մարմար քարեն:

Ոչխարն արել եմ բերը[3],
Քաշել եմ կաթի սերը:

Սարեն ես գամ, ձորեն՝ դու,
Սերն ես ուտեմ, մածուն՝ դու:

1. Գացի - գնացի
2. Լաստիկ - բրդե կամ բամբակե գործվածք
3. Բերը - փարախը

ԱՂՎԵՍ ԳՆԱՑ ՄՏԱՎ ՋԱՂԱՑ



Աղվեսգընայմըտավջաղայ,
Թաթերվերուցմի բոլ[1] խաղայ:
Հարա՛յ, աղվես, պարո՞ն աղվես,
Աշխարհքիմեջչըկա քու պես:

Մի կոտ ու կես կորեկ աղայ,
Էն էլ շալակն առավ գընայ:

Աղվես կերավ գեղի հավեր,
Փարվեկ[2] տըվավ վերի կալեր:

1. Բոլ - առատ, շատ
2. Փարվեկ տալ - ման գալ, պրոսնել

ԲԱՍԵՆ[1] ԲԱՐԻ



Բասեն բարի, Բասեն բարի,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի,
Տըղա՛, արի՛, բըռնե՛ պարի,
Հա՛յ Նուբարի, ջա՛ն Նուբարի, Նուբարի:

Երկու գընա՝ երեք արի,
Հա՛յ դոմբարի[2], ջա՛ն դոմբարի,
Աղջի՛, արի՛, բըռնե՛ պարի,
Հա՛յ դոմբարի, ջա՛ն դոմբարի, դոմբարի:

Արե՛ք խաղանք էս դոմբարին,
Բասեն բարի, Բասեն բարի,
Ինչքա՛ն ուրախ է էս տարին,
Հա՛յ դոմբարի, ջա՛ն դոմբարի, դոմբարի:

1. Բասեն - տարածք՝ հին Հայաստանում
2. Դոմբարի - պարի տեսակ

ԿՈՏ ՈՒ ԿԵՍ

Չափավոր և թեթև



Կոտ ու կես կորեկ ունեմ յանելու համար,
Ճընճղուկներ թրռան էկան ուտելու համար,
Կըռացա քար վեր առա կարկելու համար,
Ա՛յ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եկրիկ,

Պըստիկ-մըստիկ,
Փախչին, էրթան
Ման գալու համար:

Թըռան, գայլին բերդի տանիս գանգտելու համար,
Ղասաբներ ժողվան էկան մորթելու համար,
Աղջիկներ թև քըշտեցին փետելու համար,

Պառավներ պղինձ դըրին եփելու համար,
Նորհարսեր ժողվան էկան դեղմաշկի համար,
Երեցներ ժողվան էկան օրհնելու համար,

Ըռեսներ ժողվան էկան խորվածի համար,
Գուսաններ ժողվան էկան գովելու համար,
Ապարներ ժողվան էկան թամաշի համար.



III

ԴԱՍԱՐԱՆ

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Զվարթ և քնքուշ



Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն,
Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

Քո բուն՝ հյուսած ծաղիկներով-
Շուշան, նարգիզ, նունուֆարով:
Քո տեղ՝ լըցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով:

Քո թև՝ փափուկ ու խատուտիկ,
Պրստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով
Կըշորորաս ճուտիկներով:

Երբ կըկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս[1] կասես ծաղիկներին,
Սարեր, Ձորեր կըվարթ կանես,
Դարդի[2] ծովեն սիրտ կըհանես:

1. Սաղմոս - կրոնական երգ, երաժշտություն
2. Դարդ - վիշտ

ՏՈՒՆ ԱՐԻ, ՏՈՒՆ



Երևան բաղ եմ արել,
Ա՛յ, արև, արև աղբե՛ր ը ս,
Հոգիս մատաղ եմ արել,
Զա՜ն, բարև, բարև աղբե՛ր ը ս:

Տու՜ն արի, տու՜ն արի, տու՜ն, աղբե՛ր,
Արի՛, իմ խորո՛տ աղբեր:

Էլի[1], բարեկամի մոտ,
Ա՛յ, արև, արև աղբե՛ր ը ս,
Լայրս ծիծաղ եմ արել,
Զա՜ն, բարև, բարև աղբե՛ր ը ս:

Տու՜ն արի, տու՜ն արի, տու՜ն, աղբե՛ր,
Արի՛, իմ խորո՛տ աղբեր:

1. Էլ - օտար

Քո թև՝ փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով
Կըշորորաս ճուտիկներով:

Երբ կըկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս[1] կասես ծաղիկներին,
Սարեր, Ձորեր կըվարթ կանես,
Դարդի[2] ծովեն սիրտ կըհանես:

1. Սաղմոս - կրոնական երգ, երաժշտություն
2. Դարդ - վիշտ

ՉԱ՛Ր, ՉԸՆԳԸ

Չափավոր

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա, Պարենք

գիշեր լուսընկա: կա: Էս գիշեր՝ լուս-

նակ գիշեր, Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,

Զուն էկեր՝ գետին նախշեր, Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը,

թո՛ղ կընգա, Էլի՛ պարը բոլորավ,

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա, Քուրըս միջին

մոլորավ, Պարենք գիշեր լուսընկա:

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,
Պարենք գիշեր լուսընկա:
Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,
Զուն էկեր՝ գետին նախշեր,
Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,

ԵՐԻ[1], ԵՐԻ ՋԱՆ

Արագ և սիրով



Կրկնակ

Երի՛, երի՛ , երի՛ ջա՛ն,
Երի՛, մարալո[2], ջեյրա՛ն[3]:

Էս գիշեր լուսը տեսա,
Երի՛, երի՛ , երի՛ ջա՛ն,
Իմ յարը դուսը տեսա,
Երի՛, մարալո, ջեյրա՛ն:
Ելել էր ուխտ էր գալի,
Հրացանը՝ դուսը տեսա:

Արև էր ամպի տակին,
Սուրբ Հակոբի ճամփի տակին,
Մի Էնպես աղբեր ունեմ,
Հրեղեն ձին թամբի տակին:

Արևը՝ սարի վրա,
Մամուռը՝ քարի վրա,
Ես ոսկի սարք պիտեի
Իմ սիրած յարի վրա:

1. Երի - շտրոֆալով քայլեր
2. Մարալ - եղնիկ
3. Ջեյրան - այծյամ

ՉԱ՛Ր, ՉԸՆԳԸ

Չափավոր

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա, Պա - ռենք

գի - շեր լու - սըն - կա։ կա։ Էս գի - շեր՝ լուս-

նակ գի - շեր, Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,

Զուն է - կեր՝ գե - տին նախ - շեր, Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը,

թո՛ղ կընգա, Է - լի՛ պա - ռը բո - լո - ռավ,

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա, Բու - ռըս մի - ջին

մո - լո - ռավ, Պա - ռենք գի - շեր լու - սըն - կա։

Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,
Պառենք գիշեր լուսընկա։
Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,
Զուն էկեր՝ գետին նախշեր,
Չա՛ր, կընգը, կա՛ր, կընգը, թո՛ղ կընգա,

Էլի՛ պարը բոլորավ,
Զա՛ր, զընգը, զա՛ր, զընգը, թո՛ղ զընգա,
Քուրքս միջին մոլորավ,
Պարենք գիշեր լուսընկա:
Զա՛ր, զընգը, զա՛ր, զընգը, թո՛ղ զընգա,
Պարենք գիշեր լուսընկա:

ՋԱՆ, ԳԱՌՆՈՒԿ



Կապեմ վկիդ կընգ-կանգակ,
Դե, հե, կընգը, կընգը, դե, հե ջան:
Օրը տաք է, արեգակ,
Դե, հե, կընգը, կընգը, դե, հե ջան:

Կրկնակ

Ջուր կուգա վերին սարեն,
Սարն՝ օրորելեն,
Կըթափվի մարմար քարեն,
Կաթ, կաթ ծորալեն:

Դաշտը բոլոր՝ կանաչ խոտ,
Դե, հե, կընգը, կընգը, դե, հե ջան:
Արի՛ տանեմ քեզ արոտ:
Դե, հե, կընգը, կընգը, դե, հե ջան:

Կրկնակ

ԹԵՇԻԿԻ[1] ԵՐԳ

Չափավոր



Առեց թեշին,
Քրսեց փեշին
Նարգիկը.
Քրստը՝ ֆը՛ռռ[2], քրստը՝ ֆը՛ռռ,
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ :

Բարվան[3] կաշի,
Շրմշատ[4] թեշի,
Նարգիկը.
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ,
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ :

Ծընեռթն[5] արծաթ,
Թեշին՝ քանց[6] վարդ,
Նարգիկը.
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ,
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ :

Պոչը կախ ի,
Թեշին չարխ[7] ի,
Նարգիկը.
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ,
Քրստը՝ ֆը՛ռռ, քրստը՝ ֆը՛ռռ :

1. Թեշի, թեշիկ (իլիկ) - գործիք, որով կանգնած թել են մանում
2. Քրստը ֆրռռ - իլիկը ֆռռացնելու ժամանակ իրար քսվող մատների ձայնը
3. Բարվան - կաշվե գոգնոց, որի վրա քսելով ֆռռացնում են իլիկը
4. Շրմշատ - մշտադալար բույս, որի փայտից պատրաստում են թեշին
5. Ծընեռթ - թեշիկի գլխի կեռ երկաթը
6. Բանց - ինչպես
7. Չարխ - Ճախարակ

ԱՎԵՏԻՍ[1]



Ամեն տարի հասնինք բարով, ավետիս,
Երկար կյանքով, առողջ անձով, ավետիս,
Մի՛ կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Եվ մի՛ նայիք խիստ խոժոռով[2], ավետիս,
Ողորմություն արե՛ք սիրով, ավետիս,
Եվ խոսեցե՛ք անուշ լեզվով, ավետիս,
Որ մենք կՀեկ օրհնենք սիրով, ավետիս,
Որ դուք մնաք երկար ամով[3], ավետիս,
Ձեր հեռավորք գային շուտով, ավետիս,
Եվ ձեր ոչխարքն՝ հոտերով, ավետիս,
Կարասն ձեր լըցվի գինով, ավետիս,
Եվ տունը ձեր՝ շեն բարիքով, ավետիս:

1. Ավետիս - բարի լուր
2. Խոժոռ - մռայլ նայվածք ունեցող, խստադեմ
3. Ամ - տարի

ՇՈՂԵՐ ՋԱՆ

Զուիավոր և նազելի



Ամպել ա, ձուն չի՛ գալի,
Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի՛ գալի,
Շողե՛ր ջան.
Դուն՝ օրորա, դուն՝ շորորա,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողե՛ր ջան:

Սիրտըս կրբակով լցված,
Աչքերիս քուն չի՛ գալի,
Դուն՝ օրորա, դուն՝ շորորա,
Ամպի տակին ձուն կերևա:

Հուրք[1] ա թափում վերիցը,
Ես վառա քո սերիցը.
Դուն՝ օրորա, դուն՝ շորորա,
Ամպի տակին ձուն կերևա:

Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը:
Դուն՝ օրորա, դուն՝ շորորա,
Ամպի տակին ձուն կերևա:

1. Հուրք - կրակ, ջերմություն

ՍՈՆԱ՛ ՅԱՐ



Կրկնակ

Սոնա՛ յա՛ր, Սոնա՛ յա՛ր,
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յա՛ր:

Տղա. Վարդավառը գալիս ա,
Սոնա՛ յա՛ր, Սոնա՛ յա՛ր,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յա՛ր:
Ա՛յ գյուղում[1] կանչող աղջիկ,
Սոնա՛ յա՛ր, Սոնա՛ յա՛ր,
Ձենրդ ծըլվըլալիս ա:
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ յա՛ր:

Աղջիկ. Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Պարի միջին խաղում եմ,

Կաթավի պես սորալով
Տղաներին դաղում եմ:

Տղա. Կարմիր գինին՝ թասումը,
Ես եմ քո հավասումը.
Ե՞րբ կըտաքնան աղջկերք,-
Վարդավառի պասումը[2]:

Աղջիկ. Հայ, ասի՛ նա, ասի՛ նա,
Կարմիր գինին թասին ա.
Տըղեք ե՞րբ կըկոտորվին,-
Հորթաթողի[3] պասին ա:

Տղա. Սիրո՛ւն աղջիկ, նապ ունիս,
Շահկադայի սապ ունիս.
Հողեմ շահկադի[4] գըլուխ,
Դու իմ հոգում հապ[5] ունիս:



1. Գյուլի - ծաղիկ: Գյուլում կանչել - համբարձման վիճակ հանել
2. Պաս - եկեղեցական օրենքով նշված ժամանակ, երբ ամեն ինչ չի կարելի ուտել (յուղ, միս...)
3. Հորթաթող - հորթին տանը թողնելը, արածելու չտանելը
4. Շահկադա - շահի որդի
5. Հապ անել - դուր գալ, սիրել

ԷՆ ԴԻՔԱՆ



Էն դիկան, բետ-բետ[1] դիկան, տեսե՛ք էն ո՞րն է:
Էն դիկան, բետ-բետ դիկան՝ գեղի ռեսներն[2] են:

Ճընճըղներ ճըլվըլալեն, տեսե՛ք էն ո՞րն է:
Ճընճըղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն են:

Էն արև, երկնուց արև, տեսե՛ք էն ո՞րն է:
Էն արև, երկնուց արև՝ մեր թագավորն է:

Էն լուսին ամպերու մեջ, տեսե՛ք էն ո՞րն է:
Էն լուսին ամպերու մեջ՝ մեր թագուհին է:

Ցախավել իդն[3] դռան, տեսե՛ք էն ո՞րն է:
Ցախավել իդն դռան՝ էն մըշակներն են:

Շունն եկավ պարկն ի բերան, տեսե՛ք էն ո՞րն է:
Շունն եկավ պարկն ի բերան՝ գեղի գըկիրն[4] է:

Մուկն եկավ ալրաթաթախ, տեսե՛ք էն ո՞րն է:
Մուկն եկավ ալրաթաթախ՝ էն ջաղացպանն է:

1. Բետ-բետ - մեծ, խոշոր
2. Ռես - գյուղի տանուտեր
3. Իդն - ետև,
4. Գկիր - տանուտերի կարգադրությունները կատարող

ԶՈՒԼՈ

Զափավոր

Ա - ռնն ե - լով կա - մար, կա - մար,

Զու-լոն կա - պեց ոս - կե քա - մար,

Ես կը - մեռ - նեմ քե - զի հա - մար,

Ա - վա՛ղ, Զու - լո, մա - տա՛ղ Զու - լո,

Ա - վա՛ղ, Զու-լո, Զու-լո, Մա - տա՛ղ Զու - լո ջա՛ն:

Ա - վա՛ղ, Զու-լո, Զու-լո, Մա - տա՛ղ Զու - լո ջա՛ն:

Արևն ելով՝ կամար, կամար,
Զուլոն կապեց ոսկե քամար,
Ես կըմեռնեմ քեզի համար,
Ավա՛ղ[1], Զուլո, մատա՛ղ[2] Զուլո,
Ավա՛ղ, Զուլո, Զուլո,
Մատա՛ղ Զուլո ջա՛ն:

Զուխտակ[3] գութան արտ կրբանի,
Զուլոն էլն հաց կըտանի,
Աչք ու ունքով մարդ կըսպանի,
Ավա՛ղ, Զուլո, մատա՛ղ Զուլո,
Ավա՛ղ, Զուլո, Զուլո,
Մատա՛ղ Զուլո ջա՛ն:

1. Ավաղ - ափսոս
2. Մատաղ (մատղաշ) - ջահել
3. Զուխտակ - կուլգ

ԴԵՐԻԿՈ

Ջուխտավոր



Կրկնակ

Դերիկո՛, հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար, Դերիկո ջա՛ն,
Դերիկոն մեկ էր, ծամերը շեկ էր, խաթունե ջա՛ն:

Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ, Դերիկո ջա՛ն,
Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ, խաթունե ջա՛ն:
Դու կապել ես կարմիր գոտիկ, Դերիկո ջա՛ն,
Դու կապել ես կարմիր գոտիկ, խաթունե ջա՛ն:
Մարդ չես թողնի քեզի մոտիկ, Դերիկո ջա՛ն,
Մարդ չես թողնի քեզի մոտիկ, խաթունե ջա՛ն:
Իջնենք բաղչեն, քաղենք խոտիկ, Դերիկո ջա՛ն,
Էրթանք քաղենք կանաչ խոտիկ, խաթունե ջա՛ն:
Տանենք դընենք մըսրա[1] մոտիկ, Դերիկո ջա՛ն,
Տանենք դընենք մըսրա մոտիկ, խաթունե ջա՛ն:
Տեսնենք ո՞ւմ յարն է խորոտիկ[2], Դերիկո ջա՛ն,
Տեսնենք ո՞ւմ յարն է խորոտիկ, խաթունե ջա՛ն:
Իմ յարն քանց քում[3] է՛լ խորոտիկ, Դերիկո ջա՛ն,
Իմ յարն քանց քում է՛լ խորոտիկ, խաթունե ջա՛ն:

Դերիկո, հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար, Դերիկո ջա՛ն,
Դերիկոն մեկ էր, ծամերը շեկ էր, խաթունե ջա՛ն:

1. Մսուր - ախոռներում երկար փայտե տաշտ, որի մեջ լցնում են անասունների կերը
2. Խորոտիկ - գեղեցիկ
3. Քում - քո, քոնը

ՔԱՂՀԱՆ[1]



Գարնան գութան հանեցի,
Յա՛ր, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Արտը բամբակ ցանեցի,
Սոնա՛ յար, նա՛յ, նայ, նա՛յ:
Ամառն եկավ, քաղն[2] ելավ,
Յա՛ր, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Քաղհանավոր ճարեցի,
Սոնա՛ յար, նա՛յ, նայ, նա՛յ:

Քաղհան կանեմ հո՝ բարով,
Տոլմա կեփեմ բիբարով,
Աշնան անի լավ օրեր՝
Բամբակ քաղեմ նուբարով[3]:

Բեռնեմ սայլը, սար հանեմ,
Սար հանեմ ու տուն տանեմ,
Դուրս գա չարի չար աչքը,
Ձմեռ հանգիստ օր կանեմ:

1. Քաղհան - արտի, ցանքի մեջ բուսած մոլախոտերը մաքրելը
2. Քաղ - ձեռքով հատ-հատ պոկելը
3. Նուբար - տարվա առաջին պտուղը

ՀԱ՛ՅՐ ՄԵՐ



Հա՛յր մեր,
Տո՛ւր մեկ, տո՛ւր քո շընորհ,
Լիուլի ամեն օր.
Հա՛յր մեր,
Կյա՛նք տուր մեր մայրիկին,
Կյա՛նք տուր մեր հայրիկին,
Հա՛յր մեր,
Մեկ պահե՛ քո Աջով,
Մեկ օրհնե՛ տուրբ Խաչով,
Հա՛յր մեր,
Դո՛ւ պահապան մեր...

IV

ԴԱՍԱՐԱՆ

ԲԱՐԻ ԼՈՒՍՈՒՆ

Չափավոր և մեղմ



Բարի լուսուն ասող էրևայ,
Աղոթարան[1] դրոներն ի բայ,
Բառով բայվեր լուս աղոթրան,
Լըծենք սարված[2], էրթանք գութան:

Գութնի թախում՝[3] նմուշ-նմուշ,
Չըկեր վաստակ քանց էն անուշ,
Աշխարհի շեն[4] վեր գութնին էր,
Գութան չէլներ, աշխարհն ի՞նչ էր:

Խոփ քարշ կերթա գետնի տակեն,
Ակոս[5] կանի էրկեն-էրկեն,
Քանդի կորթեր[6], շուռ տա բարդ-բարդ[7],
Շընողք[8] կելնի բերքըն առատ:

1. Աղոթարան, աղոթրան - արշալույս, արևելք. մարդիկ աղոթում են դեմքով դեպի արևելք
2. Սարված - գութանի սարք
3. Թախում - գութանի ամբողջական սարք
4. Շեն - լիություն, առատություն
5. Ակոս - երկար փոս հողի վրա, որ բացում է խոփը՝ գութանի փորող մասը
6. Կորթ - խոպան հող
7. Բարդ-բարդ - հաստ, խիտ
8. Շնողք - շնորհ կանի

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Չափավոր և եռանդուն



Կրկնակ

Նանարի,նանարի,նանարի նա՛յ,
Նանարի նա՛յ,նանարի նա՛յ:

Համբարձման էրկուշաբթին,
Նանարի նա՛յ,նանարի նա՛յ,
Վերցին կփոցխ ու գերընդին,
Նանարի նա՛յ, նանարի նա՛յ:
Իշան հրտ ձորու ափին
Ծորեցին, ծորթրփեցին[1],
Մանրիկ-մանրիկ խորմեցին[2],
Կեմիկ[3] չեղավ՝ կապեցին,
Ծամթել[4] կեմիկ էրեցին.
Հոտաղ չեղավ՝ քըշեցին,
Ճընճուղ հոտաղ էրեցին.
Ճիպոտ չեղավ՝ քշեցին,
Սև օձ ճիպոտ էրեցին.

Սելիկ չեղավ՝ բարձեցին,
Մեջկունք սելիկ էրեցին.
Կես գիշերին քըշեցին,
Յարոջ դըռնով ընցուցին.
Յար քընուկ էր, չիմցուցին,
Սըրբիչ գոտուց հանեցին,
Քըրտինք ճակտեն սրբեցին:
Նանարի,նանարի,նանարի նա՛յ,
Նանարի նա՛յ,նանարի նա՛յ:



1. Ծորել, ծորթփել - խոտը հնձել և գետնի վրա տարածել՝ չորանալու համար
2. Խորմել, խորոմ - հնձած խոտի փոքրիկ դեպ, որից մի քանիսը միացնելով խուրձ են կապում
3. Կեմիկ - խոտից կամ ուռենու ճյուղերից ոլորված պարան, որով խուրձ են կապում
4. Ծամթել - մակերի կապ, ժապավեն

ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳ

Դանդաղ և հանդիսավոր



Ամեն հայի սըրտից բըխած՝
Լըսի՛ր այս ձայն, ո՞վ աստված,
Երկար կյա՛նք տուր Հայրապետին,
Երկար օրեր՝ Հայոց Հոր:
Տե՛ր, անսասա՛ն պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ



Անձրևն եկավ շաղալեն,
Ուռու տերն՝ դոդալեն.
Վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե,
լե, լե՛, լե՛, լե, լե՛:
Հըրես եկավ իմ աղբեր,
Ալ[1] ձին տակին խաղալեն:
Վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե,
լե, լե՛, լե՛, լե, լե՛:

Դեմ աղոթրան խաչ անեմ,
Թըշնամու դեմ չանչ անեմ.
Ձեռըս գըցեմ վըզովը,
Մի երեսը պաչ անեմ:

Խալիչեքը[2] փըռել եմ,
Նախշուն բարձեր դըրել եմ.
Թառլա՛ն ջան, քեզ ուտելու
Սեր, կարագ հապըրել եմ:

Տապկած հավի ճուտ բերեմ,
Ոչխարի մածուն մերեմ.
Որ գիտենաս, անու՜շ ջան,
Թե քեզ սրրտով կըսիրեմ:

Ղուշ[3] մի՛ դառնա թևավոր.
Դու խաղ կանչի ձնավոր.
Յարա՛ր[4], կըլնի՛ էն օրը,
Որ գաս մեր տուն թագավոր:



1. Ալ - վառ կարմիր
2. Խալիչնքը - գորգերը
3. Ղուշ - թռչուն
4. Յարար - արդյոք

ՍԻՐՈՒՆ ՏՂԱ, ԵՐԿԻՆՔ ԿԸԼՆԵՄ



- Սիրո՛ւն տըղա, երկինք կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՛ր ջան:
- Անո՛ւշ աղջիկ, աստըղ կըլնեմ,
Ծոցիդ շող տամ, յա՛ր ջան:
- Սիրո՛ւն տըղա, բամբակ կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՛ր ջան:
- Անո՛ւշ աղջիկ, կըրակ կըլնեմ,
Քեզ կըայրեմ, յա՛ր ջան:
- Սիրո՛ւն տըղա, խնձոր կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՛ր ջան:
- Անո՛ւշ աղջիկ, դանակ կըլնեմ,
Քեզ կըկըտրեմ, յա՛ր ջան:

ՀԱԲԲԱՆ

Չափավոր և աշխույժ

Տղա - *Աղջիկ -* *Տղա -*

Հա - բըր -բա՜ն: Զա - նե ջա՜ն: Պրպ - տիկ աղ - ջիկ,

համ ու - նիս, Զո - ռեք - դի - մաց ծամ ու - նիս,

Խուն - ջիկ - մուն - ջիկ մի - ա - նի, Ինձ սա - նե - լու

կամ՝ ու - նիս: Խուն - ջիկ - մուն - ջիկ մի - ա - նի,

Աղջիկ -

Ինձ սա - նե - լու կամ ու - նիս: Հա - բըր - բա՜ն:

Տղա - *Աղջիկ -*

Զա - նե ջա՜ն: Զու - ռը իր ճամ - փով կեր - թա,

ցո - ղա - ծը վար - դի թերթ ա. Ինձ սի - ռող կըտ -

ռիճ տը - ղեն, Հա - կա - ռի մեջ մի բեռդ ա:

Գ1,2,3.

Ինձ սի - ռող կըտ - ռիճ տը - ղեն Հա - կա - ռի մեջ

Տղա - Հաբրրբա՜ն:
Աղջիկ - Զանն ջա՜ն:
Տղա - Պրկտիկ աղջիկ, համ ունիս,
Չորեքդիմայ[1] ծամ ունիս,
Խունջիկ-մունջիկ[2] մի՛ անի,
Ինձ առնելու կամ[3] ունիս:
Աղջիկ - Հաբրրբա՜ն:
Տղա - Զանն ջա՜ն:
Աղջիկ - Զուրը իր ճամփով կերթա,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կտրիճ տըղեն,
Հազարի մեջ մի բերդ ա:
Տղա -. Ձեր տան տակին վար կանեմ,
Չալ ագռավին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գըժությունս թարկ կանեմ[4]:
Աղջիկ - Աշուղի պես խաղ ասա,
Բլբուլի[5] պես տաղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մոր գովական փեսա՛:



1. Չորեքդիմայ - չորս կողմը տարածվող
2. Խունջիկ - մունջիկ - նապ անել
3. Կամ (կամք) - ցանկություն
4. Թարկ անել - վերջ տալ, ձեռք քաշել
5. Բլբուլ - սոխակ

ԱՌԱՒՈՏ ԼՈՒՍՈՅ



Առաւոտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛ւ:

Բղխումն ի հորէ,
Բղխեա՛ ի հոգւոյս
Բա՛ն քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտո՛ղ կիս արա:

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բա՛ց,
Դաւեցո՛ վերնոցն:

Երրեակ միությո՛ւն,
Եղելոց խնամո՛ղ,
Եւ ի՛նձ ողորմեա:

Զարթի՛ր, Տէ՛ր, յօգնել,
Զարթո՛ պթմրեալս,
Զուարթնոց նմանիլ:

Է՛դ Հայրն անսկիզբն,
Էակիս Որդի,
Է՛ միշտ սուրբ Հոգի:

Հաստեա՛ հաւատով,
Հաստատեա՛ յուսով,
Հիմնեցո՛ սիրով:



ՀՈՒՆՁԻ ԵՐԳ



Մեր տանը դեմ՝ հասած գարի,
Քանի քաղեմ՝ հովը տանի,

Երկու կաքավ մեջ կը բանի՝
Մեկն իմ յարիս շատ նըման ի:

Աչքը, ունքը թառը քաշած,
Երեսները վարդ նըմանի.

Այդ իմ յարս է սըրտով սիրված՝
Շըրթներն ալ կեռաս նըմանի:

Քովի արտը՝ հասած ցորեն,
Պիտի քաղենք ութը օրեն,

Մեր ամբարներ[1] պիտի լեցվին՝
Հատիկներով ոսկի նորեն:

1. Ամբար - ցորեն, ալյուր պահելու տեղ

ՔԵԼԵ՛, ՔԵԼԵ՛



Քելե՛, քելե՛, քելքի՛դ մեռնեմ,
Քո գովական խելքի՛դ մեռնեմ:
Սիրավո՛ր լորիկ,
Վիրավո՛ր լորիկ,
Լորի՛կ,
Սնավո՛ր լորիկ,
Լորի՛կ ջան:

Քելե՛, քելե՛, սոյի՛դ[1] մեռնեմ,
Քո չինարի բոյի՛դ մեռնեմ:

Քելե՛, քելե՛, քոոի՛դ մեռնեմ,
Քո լուսընկա շոոի՛դ մեռնեմ:

Քելե՛, քելե՛, ձեռի՛դ մեռնեմ,
Քո հուր-կըրակ սերի՛դ մեռնեմ:

Քելե՛, քելե՛, աչի՛դ մեռնեմ,
Քո անուշիկ պաչի՛դ մեռնեմ:

1. Սոյ - ցեղ

ԷՐԻՇՏԱՅԻ[1] ԵՐԳ



Ալյուր մաղեմ՝ թեփ[2] կուգա,
Շեկլիկ աղբեր ե՞ր կուգա.
Մեռնեմ գալած բեխերին,
Մեջեն խրնկահոտ կուգա:

Սարի տակը տուն ունիմ,
Մեջը օսկե սուն ունիմ,
Ալամ[3] աշխարհի իմանամ՝
Քեզի պես մարալ[4] ունիմ:

Ախչի՛, անունդդ՝ Սոնա,
Ուրիշին հարս մի՛ գընա,
Առանց քեզ սև է օրըս,
Էման[5] ասա՛ քու մորը:

Սարերի սինձը ի՞նչ է,
Եղ ու բըրինձը ի՞նչ է,
Աղջիկն օր[6] տղին սիրե,
Խոսք ու խըրատը[7] ի՞նչ է:

Անցա ճամբու ոլորը,
Բլոնեցի նախշուն լորը,
Տղերք, էկեք պար քըռնենք,
Էրիշտայի բոլորը:



1. Էրիշտա, արիշտա - խմորից պատրաստվող ուտելիք
2. Թեփ - հացահատիկի աղալուց մնացած մանրուքը
3. Ալամ - ամբողջ
4. Մարալ - եղնիկ
5. Էման - այսպես
6. Օր - այստեղ՝ որ
7. Խոսք ու խրատ - խոսք ու պրույց

ԳՈՒԹԱՆԸ ՀԱՑ ԵՄ ԲԵՐՈՒՄ

Գնայուն և անուշիկ

Գու - թա - նը հայց եմ բե - րում,

Բե - րա - նը բայց եմ բե - րում.

Տե՛ս, քեզ որ - քան եմ սի - րում,

Զու - կը տապ - կած եմ բե - րում:

Գութանը հայց եմ բերում,
Բերանը բայց եմ բերում.
Տե՛ս, քեզ որքան եմ սիրում,
Զուկը տապկած եմ բերում:

Էսօր գութանը մերն ա,
Մաճ[1] բրոնողը իմ հերն ա,
Եվնարած շեկլիկ տղեն՝
Աշխարհ գիտե՝ իմ տերն ա:

Վեր կացա հավախոսին[2]՝
Գութանն ա վարում փոսին.
Բարկ[3] արևը երկընքում՝
Շողն ա դիպել ակոսին[4]:

1. Սաճ - արորի կոթը, որից բռնելով մաճկալը վար է անում
2. Հավախոս - աքլորի կանչելու ժամանակը, լուսադեմ
3. Բարկ - թեժ, այրող
4. Ակոս - երկար փոս հողի վրա, որ բացում է խոփը՝ գութանի փորող մասը

ՍԱՆԴԻ ԵՐԳ

Եռանդուն

Ո՛ւ, խաւ-նե, ո՛ւ, խաւ-նե, ո՛ւ, խաւ-նե,

ո՛ւ, խաւ-նե, Ո՛ւ, խի - յո, ո՛ւ, խի - յո,

ո՛ւ, խի -յո, ո՛ւ, խի - յո, Սանդ կը - ծե- ծեմ
Կե - տուր, կես-բար

գա - բի, յո -բեն, Խաւ - նե, խաւ - նե, խի - յո, խի - յո,
մեկ - տեղ ու -տեն:

Խաւ - նե, խաւ -նե, խի - յո, խի -յո, Խաւ - նե, խաւ - նե,

խի - յո, խի -յո: Խաւ - նե, խաւ - նե, խաւ - նե,

խի, Խի - յո, խի - յո, խի - յո, խի, Խաւ - նե,

խաւ - նե, խաւ - նե, խի, Խի - յո, խի - յո,

խի - յո, խի, Ու - շը, ու - շը, ու - շը:

Ո՛ւ, խանե՛[1], ո՛ւ, խանե՛, ո՛ւ, խանե՛, ո՛ւ, խանե՛,
Ո՛ւ, խիյո՛[2], ո՛ւ, խիյո՛, ո՛ւ, խիյո՛, խիյո՛,
Սանդ կըծեծեմ գարի, ցորեն,
Կեսուր, կեսրար մեկտեղ ուտեն:
Խանե՛, խանե՛, խիյո՛, խիյո՛,
Խանե՛, խանե՛, խիյո՛, խիյո՛,
Խանե՛, խանե՛, խիյո՛, խիյո՛:
Խանե՛, խանե՛, խանե՛, խի՛,
Խիյո՛, խիյո՛, խիյո՛, խի՛,
Խանե՛, խանե՛, խանե՛, խի՛,
Խիյո՛, խիյո՛, խիյո՛, խի՛,
Ո՛ւշը, ո՛ւշը, ո՛ւշը:

Մեռնի՛մ թեին, ուժ կա ինե[3],
Ուժ տո՛ւր թեին, թե տո՛ւր քարին:

Բերն ու բարին՝[4] վեր մեր թաղին,
Քարն ու քըռեն՝ ներքին թաղին:



1. Խանե - հանիր. ասում էին, երբ քարե մուրճը բարձրացնում էին և պատրաստվում նոր հարվածի
2. Խիյո - բացականչություն է, գործածվում է, երբ սանդ ծեծողը քարե մուրճով հարվածում է խյուսին (թրջված հատիկին)
3. Ինե - մեջ
4. Բերն ու բարին - բերքն ու բարիքը

ԾԱՄԹԵԼ[1]

Քիչ աշխույժ



- Ծամերուս ծանրութենեն ծամթել կտրավ, ծովն ի ընկավ:
- Լողվորի վարպետ ե՛ս իմ, մենկ լե՛ ես իմ,
  կըհանիմ կծամթելն ի ծովեն:
- Զիմ վըկի վըկնոց կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Լողվորի վարպետ ե՛ս իմ, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:

- Զիմ ոսկե գոտին կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Լողվորի վարպետ ե՛ս իմ, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:
- Զիմ խաս ու ատլաս[2] կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ կէնիմ խաս ու ատլաս, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:
- Զիմ օտան[3] խալխալ[4] կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ կէնիմ օտան խալխալ, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:
- Զիմ հոր մալ ու մուլք[5] կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ կէնիմ հորդ մալ ու մուլք, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:
- Զիմ մեյդան[6] ճակատ կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Ի՞նչ կէնիմ մեյդան ճակատ, չե՛մ հանի կծամթելն ի ծովեն:
- Զիմ շարմաղ[7] ծոցիկ կիտամ, դե հանե՛ կծամթելն ի ծովեն:
- Լողվորի վարպետ ե՛ս իմ, մե՛կ լե՛ ես իմ,
կրհանիմ կծամթելն ի ծովեն:

1. Ծամթել - մարդերի կապ, ժապավեն
2. Խաս ու ատլաս - մետաքս
3. Օտան - ոտքի
4. Խալխալ - մետաղյա ապարանջան (ոտքի կամ ձեռքի)
5. Մալ ու մուլք - ունեցվածք, հարստություն
6. Մեյդան - հրապարակ (այստեղ՝ լայն, մեծ)
7. Շարմաղ - նուրբ

ՏԵ՛Ր, ՈՂՈՐՄԵԱ՛

Տե՛ր, ող - որ - մեա՛, Տե՛ր, ող -

որ - մեա՛, Տե՛ր, ող - որ - մեա,

Տե՛ր, ող - որ - մեա՛: Ա - ղի՛, Աս - տուա՛ծ,

հար - ցը՝ն մե - ռոց, Որ ա -

պա - ւէնդ ես նե - ղե - լոց:

Հա՛ս յօգ - նու - թիւն ծա - ռա -

յից Քոց, Ան - օգ - նա կան


ապ - գիս հա - յոց: Տե՛ր, ող - որ - մեա՛,

Տե՛ր, ող - որ - մեա՛: Շնոր - հիւ

ա - ւուրս մեկ ող - որ մեա՛:

Տե՛ր, ողորմեա՛, Տե՛ր, ողորմեա՛,
Տե՛ր, ողորմեա՛, Տե՛ր, ողորմեա՛:
Արի՛, Աստուա՛ծ, հարցը՝ն մերոց,
Որ ապաւէ՛նդ ես նեղելոց:
Հա՛ս յօգնութիւն ծառայից Քոց,
Անօգնական ազգիս հայոց:
Տե՛ր, ողորմեա՛, Տե՛ր, ողորմեա՛:
Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա՛:

ԱՆԴԱՍՏԱՆ


f Գնայուն և վեհափառ
I
Ա - ռե - վե - լյան կողմն աշ - խարհ - հի Խա - ղա -ղու-թյո՛ւն
II
f
f
...մյ - ղեղ ըլ - լա... Խա - ղա - ղու - թյո՛ւն թո՛ղ ըլ - լա...

p

p լուսավոր

Ո՛չ ար - յուն - ներ, քըր - տինք հո - սին Լայն ե - ռա - կին

p

f հուժկու և թափ առնելով

Ու երբ հըն - չեն կոչ - նակն ա - մեն

մեջ ա - կո - սին.

f

f

, ff տիեզերածավալ

գյու - ղա - կի՝ Օրհ - ներ-գու-թյո՛ւն թո՛ղ ըլ - լա։

, ff

ff

8



Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՛ւն թո՛ղ ըլլա...
Ո՛չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.
Ու երբ հընչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՛ւն թո՛ղ ըլլա:

Արևմըտյան կողմն աշխարհի
Բերրիությո՛ւն թո՛ղ ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի[1],
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղի՛կ թո՛ղ ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատությո՜ւն թո՛ղ ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն[2] աղուններուն[3] երբ բացվի՝
Բերկրությո՜ւն թո՛ղ ըլլա:

Հարավային կողմն աշխարհի
Պըտղաբերում թո՛ղ ըլլա...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Հորդի՜ գինին բաժակներուն.
Ու երբ թրխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՜ւն թո՛ղ ըլլա:



1. Այլակել, ալյակել - ալիքել
2. Ամբար - ցորեն, ալյուր պահելու տեղ
3. Աղուն - աղալու համար պատրաստված հատյահատիկ

Բովանդակություն

2- րդ դասարան

Իմ չինարի յա՛րը 5
Աղվեսը 7
Ա՛յ ինդիլո 9
Լորիկ 10
Տամբուրն 11
Հա՛յ, կընգա 12
Կռո՛ւնկ, ծափ տո՛ւր ու թռի՛ 13
Հո՛յ, Նարե՛ 15
Աղվես պառկեց ճամփի տակին 16
Եղնիկ 17
Նարը՛մ նանայ 18
Գնացե՛ք տեսեք՝ ո՞վ է կերել այծը 20
Հոպա կարկե՛ ու քելե՛ 22
Աղվես գնաց մտավ ջաղաց 23
Բասեն բարի 24
Կոտ ու կես 25

3-րդ դասարան

Կաքավի երգը 29
Տո՛ւն արի, տո՛ւն 31
Երի, երի ջա՜ն 32
Ջա՛ր, կընգը 33
Ջա՜ն, գառնուկ 35
Թեշիկի երգ 36
Ավետիս 38
Շողե՛ր ջան 39
Սոնա՛ յար 41
Էն դիզան 43
Ջուլո 44
Դերիկո 46
Քաղհան 47
Հա՛յր մեր 48

4-րդ դասարան

Բարի լուսուն	51
Համբարձման էրկուշաբթին	52
Ազգային օրհներգ	54
Անձրևն եկավ	55
Սիրո՛ւն տղա, երկինք կըլնեմ	57
Հաբրբան	58
Առաւո՛տ լուսոյ	60
Հունձքի երգ	62
Քելե՛, քելե՛	63
Էրիշտայի երգ	65
Գութանը հայ եմ բերում	67
Սանդի երգ	69
Ծամթել	71
Տե՛ր, ողորմեա՛	73
Անդաստան	75